Արձանագրություն N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

26.08.2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Կուբատյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Մանուկյան, Ի. Նիկողոսյան, Ա. Ղարիբյան, Ռ. Զարբաբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 26.08.2020 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ**

(Ի. Կուբատյան)

Պարզաբանման պահանջի տեքստ հ 1.

հարգելի գործընկեր
պայմանագրի
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
Ոնց կլինի մենք վճարում ենք 30 տոկոս և 15 , դուք 0.05, որ օրենքի հիմքով է նախատեսված այս պայմանները

Պարզաբանում տրամադրելու տեքստ.

հարգելի գործընկեր,
ի պատասխան Ձեր հարցման՝ նշենք, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ: Ըստ այդմ՝ պայմանագրի 6.2 կետը փոխվել է հետևյալի՝

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Իսկ պայմանագրի 6.3 կետը փոխվել է հետևյալի՝

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 3 (երեք) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի Նախագահ՝		Ի. Կուբատյան
Անդամներ՝		Ս. Մանուկյան
		Ի. Նիկողոսյան
		Ա. Ղարիբյան
		Ռ. Զարբաբյան
Քարտուղար՝		Վ. Մեժունց